ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵՄԵՐՃԵԱՆ
ՈՐ Ի ՓԱՐԻԶ, ՖՐԱՆՍԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ ջերմօրէն շնորհաւորում ծննդեան 90-րդ տարեդարձի օրհնեալ առիթով:

Մեծարգոյ պրն Սեմերճեան, Ձեր կեանքի ասպուածաշնորհ տարիները լի են ստեղծագործական հարուստ վաստակով: Ձեր արուեստի մէջ Դուք ներդաշնակօրէն միաձուլել էք ազգայինն ու համաշխարհայինը, արժանանալով գեղարուեստի տեսաբանների ու քննադատների բարձր գնահատանքին: Ձեր վրձնած բարձրարուեստ ստեղծագործութիւնները Ձեր անունը քաջածանօթ են դարձրել արուեստասէր հասարակայնութեանը ինչպէս Ֆրանսիայում, նոյնպէս եւ շատ երկրներում: Այսօր շնորհաշատ հայորդուդ գործերը իրենց իւրօրինակ եւ նրբաճաշակ մտածողութեամբ ցուցադրւում են բազմաթիւ հանրայայտ թանգարաններում ու անհատական հաւաքածուներում, ի շարս որոց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հիացմունք պարգեւելով այցելուներին:

Ձեր ստեղծած գեղանկարչական մեծ ժառանգութիւնը կրում է կնիքը Ձեր հայրենանուէր ու եկեղեցասէր հոգու: Հայոց Մեծ եղեռնին նուիրուած շարքով, որն այսօր ցուցադրւում է Երեւանի՝ Հայոց ցեղասպանութեան թանգարանում, Դուք ձօն էք հնչեցրել մեր անմեղ նահատակների սուրբ յիշատակին, նաեւ արուեստի ճանապարհով մարդկութեան ուշադրութիւնը հրաւիրելով մեր ժողովրդի նկատմամբ իրականացուած ոճիրի վրայ:

Գոհութիւն Աստուծոյ, որ մեր ժողովրդին պարգեւել է Ձեզ պէս փաղանդաւոր զաւակ, որ իր ողջ կեանքն ապրելով Հայրենիքից հեռու՝ միշտ մնացել է հարազատ զաւակը իր ժողովրդի եւ կրողը նրա հոգեւոր ու մշակութային դարաւոր արժէքների:

Ծննդեան յոբելեանի առիթով, սիրելի պրն Սեմերճեան, բերելով Ձեզ Մեր բարձր գնահատանքը, ի խորոց սրտի աղօթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջ կեանքի երկար տարիներ: Թող Բարձրեալ Տէրը պարգեւի Ձեզ նոր եռանդ ու ստեղծագործական աւիւն, որպէսզի շարունակէք Ձեր բոլորանուէր ծառայութիւնը արուեստին, մեր Հայրենիքին ու ժողովրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 3-ն Մարտի
յամի Տեառն 2010 ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1009